ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՖՐԱՆՍԻԱ

21.11.2013 17:35

Հայաստանի փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակությունը երեկ՝ նոյեմբերի 20-ին Փարիզում հանդիպել է ԿԱՐՊԱ-ի Ազգային միության նախագահ Ժան Շարլ Կրեբսին: Ողջունելով Հայաստանի պատվիրակությանը՝ Կրեբսը նշել է, որ Հայաստանում փաստաբանական ինստիտուտն ունի բոլոր նախադրյալները ինտեգրվելու եվրոպական փաստաբանական ընտանիքին: Արա Զոհրաբյանն, իր հերթին, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, նշել է, որ հայ և ֆրանսիացի փաստաբանների կապերը դեռևս չեն գտնվում բավարար մակարդակի վրա, սակայն առկա է մեծ ներուժ դրանք ակտիվորեն զարգացնելու համար:

Զրուցակիցները երկուստեք ընդգծել են Հայաստանում ԿԱՐՊԱ փաստաբանական վճարումների համակարգի ներդրման կարևորությունը: Քննարկվել է նաև համակարգի համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի ստեղծման հնարավորությունները:

Արա Զոհրաբյանը նշել է,- «**ԿԱՐՊԱ համակարգի ներդրումը Ֆրանսիայում բարեհաջող ստացվել է նաև այն պատճառով, որ գործարքները կատարվում են անկանխիկ՝ օրենքի ուժով, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում այդպիսի սահմանափակումներ չկան բացառությամբ տնտեսավարող սուբյեկտների դրամարկղային որոշ գործառնությունների: Հետևաբար, անհրաժեշտ է, այնպիսի պայմանների ստեղծումը, որը գրավիչ կդարձնի ԿԱՐՊԱ համակարգը: Օրինակ օրենքով կարելի է փաստաբանների պալատի դեպոզիտ վճարելը համարել պարտավորության կատարում, ինչպես, որ դա արվում է նոտարի կամ դատարանի դեպոզիտ վճարելով: Դա լրացուցիչ միջոցներ փաստաբանների պալատ բերելու հնարավորություն կստեղծի, իսկ փաստաբաններն էլ հնարավորություն կունենան քրեական գործերով գրավները, ինչպես նաև քաղաքացիաիրավական գործարքներով վճարումները կատարել դեպոզիտ հաշվին՝ անվճար**:»:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի խնդրանքով Կրեբսը ներկայացրել է այն ճանապարհը, որը կիրառվել է Ֆրանսիայում ԿԱՌՊԱ-ի ներդրման առումով: Ֆրանսիացի փաստաբանները հայ գործընկերներին խոստացել են տրամադրել այն բոլոր անհարժեշտ փաստաթղթերը և տեխնիկական լուծումները, որոնք կօգնեն հասնելու ցանկալի արդյունքի: Որպես օրինակ, ներկայացվել է նաև Մարոկկոյի փորձը, որտեղ ևս հաջողությամբ է ներդրվել այդ համակարգը:
Հանդիպման ընթացքում մեծապես կարևորվել է ԿԱՌՊԱ-ի միջազգային տարածման հարցը և այս համատեքստում կողմերը պայմանավորվել են, որ Հայաստանը կստանձնի Ռուսաստանում ԿԱՌՊԱ-ի դերի զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

Աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ փաստաբանների պալատի պատվիրակությունը հանդիպում է ունեցել Փարիզի փաստաբանների պալատի նախագահ Քրիստիան Ֆերալ Շուլի հետ: Հանդիպման ավարտին կողմերը ստորագրել են ՀՀ փաստաբանների և Փարիզի փաստաբաների պալատների միջև համագործակցության մասին պայմանագիր:

Նոյեմբերի 20-ի երեկոյան Արա Զոհրաբյանը մասնակցել է Հայ փաստաբանների և իրավաբանների ֆրանսիական միության՝ AFAJA-ի տարեկան ճաշին, որտեղ հրավիրված են եղել Ֆրանսիայի փաստաբաններ և իրավաբաններ: Ճաշի միջոցառման ժամանակ ներկայացվել է Փարիզի փաստաբան, ազգությամբ հայ Սևակ Թորոսյանի Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության վերաբերյալ աշխատությունը: Ճաշին ներկայացվել է նաև երկու ֆրանսիացիների Թուրքիայում բնակվող ծպտված հայերի մասին աշխատությունը: Հեղինակները ներկա էին և իրենք են ներկայացրել իրենց աշխատությունը:

AFAJA-ի նախագահ Ալեքսանդր Գյուլումջյանը ողջունել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի այցը և կարևորել երկու պալատների միջև համագործակցության պայմանագրի ստորագրումը:
Հիշեցնենք, որ Հայաստանի փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակության այցի նպատակն է Փարիզի փաստաբանական միության հետ գործընկերության ամրապնդումն ու խորացումն է, որը կարող է հնարավորություն ընձեռել համագործակցություն ստեղծել Ֆրանսիայի, ինչպես նաև եվրոպական այլ երկրների փաստաբանական միությունների և միջազգային կազմակերպությունների համար:
Այցն իրականացվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Նախորդ նորությունը: ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ՖՐԱՆՍԻԱ

Հաջորդ նորությունը: ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Առաջարկվող նորություններ

20.09.2013ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

23.10.2013ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (ABA/ROLI) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

18.10.2013ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀԻ 17.10.2013Թ «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԾՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })